գեր. Սարգիս արքեպիսկոպոս Զալալեան *) և Մակար եպիսկ. Բարխուդարեանց **) անձամբ շրջել են Ուտիացոց աշխարհում, բայց սրանք շատացել են գրել միայն տեղագրական չոր ու ցամաք տեղեկութիւններ։ Իսկ Ուտիացոց ժողովուրդների վարք ու բարքի, ընտանեկան նիստ ու կացի, ազգային հնաւանդ սովորութիւնների ու առանձնայատկութիւնների, նրանց հոգեկան ու բարոյական արժանիքների և թերութիւնների մասին չէք գտնի և ոչ մի խօսք։ Հարկաւ, այս ամենի մասին ժողովրդի ներքին խաւերում չէր կարող թափանցել ոչ մի ճանապարհորդ, որի բուն նպատակն է շրջել գիւղէ գիւղ, քաղաքէ քաղաք և իւր տեսածներն ու լսածները ճշտութեամբ գրի առնել։ Մի անծանօթ և մոռացուած ժողովրդի հոգեկան և բարոյական պատկերը իւր հարազատութեամբ միայն նա կարող է ստոյգ արձանագրել, ով որ այդ երկրումն է ծնուել ու սնուել և կամ այդ երկրումն է ապրել ու շնչել երկար տարիներից ի վեր։ Ի դէպ է ասել, որ, բարեբախտաբար, գեր. Տ. Արիստակէս արքեպիսկ. Սեդրակեան սրբազանը այդ կողմից, իւր կարգակից սրբազան եղբարց մէջ, մի առանձին բացառութիւն է կազմում։ Վասն զի՝ 1867 թ. Ղարաբաղի Թեմ. Առաջնորդ Զալալեան Սրբազան իւր փոխանորդ 22-ամեայ երիտասարդ բարձր. Տ. Արիստակէս վար-

---

*) «Ճանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան», հատոր բ. տես, 379—380 երես։

**) «Աղուանից երկիր և դրացիք», տես, երես 244—245։